

ԱՊԱԳԻՆ

ԽԳ. ՏԱՐԻ ԹԻ 2402 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 18 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2023
• VOL. XLIII, NO 2402 • 18 SEPTEMBRE 2023 • MONDAY, 18 SEPTEMBER 2023



KOMITAS
SALON FUNÉRAIRE

Entrusted for over 25 years

Journey Home™ coverage included with new pre-arrangement contracts* (\$595 value)

www.komitas.ca (514) 331-0400

ՂԱԻԹ ԲԱԲԱՅԵԱՆ. «ԲԵՐՁՈՐԻ ՄԻՋԱՆՑՔԸ ԲԱՆԱԼՈՒ ՈՒՂՈՒԹԵԱՄԲ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ, ԴԵՌ ՆՈՐՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ»

Բերձորի միջանցքը բանալու ուղղությամբ այս պահուն ալ բանակցությունները կը շարունակուին, դեռ նորություն չկայ: Այս մասին NEWS.am-ին յայտնած է Արցախի Հանրապետության Նախագահի խորհրդական Դաւիթ Բաբայեան: Ան նշած է, որ կը սպասեն նորություններու, դեռ չեն գիտեր բանակցությունները ինչ արդիւնք պիտի տան:



Նշենք, որ երեքշաբթի 12 Սեպտեմբերին, Ադրամի ուղղությամբ Արցախ մտաւ մէկ բեռնատար ռուսական մարդասիրական օգնութիւնը, որմէ ետք, ըստ համաձայնութեան, պէտք է բացւեր Բերձորի միջանցքը, սակայն անիկա մինչեւ հիմա փակ է:

ՖՐԱՆՍԱՆ ԵԱՅԿ-ԻՆ ԿՈՉ Կ'ՆԵ ԱՐԴԻՒՆԵՐԻ ՀԱՍՆԵԼՈՒ ԲԵՐՁՈՐԻ ՄԻՋԱՆՑՔԻ ԲԱՅՍԱՆ

Ֆրանսան ԵԱՅԿ-ին կոչ կ'ընէ արդիւնքի հասնելու Բերձորի միջանցքի բացման: Այս մասին, ըստ ԵԱՅԿ-ի մէջ Ֆրանսայի ներկայացուցչութեան, յայտարարած է կազմակերպութեան մէջ Ֆրանսայի դեսպանը:



«Նախագահ Էմանուէլ Մաքրոնի յանձնարարութեամբ Ֆրանսան կոչ կ'ընէ ԵԱՅԿ-ին հասնելու Բերձորի միջանցքի անյապաղ բացման եւ կ'ընդգծէ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդին կարիքները բարարելու համար անյապաղ միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտութիւնը», - ըսած է Ֆրանսայի դեսպանը:

ԽԱԻԹԵՐ ԿԱՐՍԻԱ. «ՄԵՆՔ ԶԵՆՔ ԿՐՆԱՐ ԱՅՆ ՈՒՂՈՒԹԵԱՄԲ ՆԱՅԻԼ, ԵՐԲ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴԸ ԱՐՑԱՒԻ ՄԵՋ ԿԸ ՏԱՌԱՊԻ ՄԱՐԴԱՅՆԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԷ»

Ուրուկուէյի պաշտպանութեան նախարար Խալիեր Կարսիան Պուենոս Այրեսի մէջ ՄԱԿ-ի խաղաղարար գործողութիւններուն նուիրուած Լատինական Ամերիկայի եւ Գարիպեան աւազանի համաժողովին ժամանակ անդրադարձած է Ատրպէյճանի կողմէ Լեռնային Ղարաբաղի շրջափակման: Այս մասին յայտնած է Diariorarmenia-ն:



«Մենք չենք կրնար այլ ուղղությամբ նայիլ, երբ հայ ժողովուրդը Արցախի մէջ կը տառապի մարդկայնական ճգնաժամէ՝ Բերձորի միջանցքի փակումէն ետք մարդու իրաւունքներու ոտնահարումներուն պատճառով: Եթէ խաղաղութեան այս ցամաքամասը, որ կը միաւորէ մեզ եւ որ մենք կ'ընդունինք, իսկապէս ցամաքամաս է առաջնորդի կոչումով, ուստի անիկա չի կրնար չդատապարտել խաղաղութեան եւ մարդու իրաւունքներու դէմ ոտնձգութիւնները, որոնք կ'իրականացուին Ուքրանիոյ մէջ ռուսական ներխուժումէն ի վեր, ինչպէս նաեւ մարդու իրաւունքներու խախտումները, որոնց հետեւանքները կը կրէ հայ ժողովուրդը», - յայտարարած է Խալիեր Կարսիան:

Շաբաթ՝ 9 Սեպտեմբեր 2023-ին, Արցախի Հանրապետության Ազգային Ժողովի արտահերթ նիստին գործող պետական նախարար Սամուէլ Շահրամանեան ընտրուեցաւ Արցախի Հանրապետության Նախագահ: Յաջորդ օրը Նորընտիր Նախագահը երդում կատարեց՝ ձեռքը դնելով Սահմանադրութեան եւ 17-րդ դարու Աւետարանին վրայ: Սոյն առթիւ կը հրատարակենք Ռամկավար Ազատական Կուսակցութեան Գերագոյն Խորհուրդի եւ Ռամկավար Ազատական Կուսակցութեան Համադրուած Մամուլի Համախումբի շնորհաւորական նամակները (տեսնել էջ 1), Նոյնպէս՝ ԹԵՔԵԱՆ Մշակութային Միութեան Միացեալ Նահանգներու եւ Գանատայի Կեդրոնական վարչութեան նամակը (տեսնել էջ 3):

ՌԱՄԿԱՎԱՐԱԶԱՏԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ
ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՐԴ



ARMENIAN DEMOCRATIC
LIBERAL PARTY
SUPREME COUNCIL

755 Mount Auburn Street
Watertown, MA 02472 USA
Պոստով 12 Սեպտ. 2023

Մեծարգոյ Տիար Սամուէլ Շահրամանեան Նորընտիր Նախագահ Արցախի Հանրապետության Ստեփանակերտ

Յանուն Ռամկավար Ազատական Կուսակցութեան Գերագոյն Խորհուրդի, ջերմագինս կը շնորհաւորենք Ձեզ Արցախի Հանրապետության Նախագահ ընտրուելու առիթով եւ կը մաղթենք ուժ, կարողութիւն եւ կամք՝ յաղթահարելու հերոսական Արցախին դիմագրաւած ներկայ ճգնաժամային մարտահրաւերները:

Նոյն առիթով կը շնորհաւորենք նաեւ Արցախի Հանրապետության խորհրդարանը եւ բովանդակ արցախահայութիւնը իրենց իմաստութեան, պետականօրէն եւ ազգային բարձր գիտակցութեամբ տնօրինելու իր ինքնադեկլարման, ինքնիշխանութեան եւ ինքնապահպան դժուարագոյն խնդիրները:

Զօրակցութիւն յայտնելով Ձեր գլխաւորութեամբ գործող իշխանութեան եւ հերոսական արցախահայութեան, կը վստահեցնենք, Պարոն Նախագահ, որ Ռամկավար Ազատական Կուսակցութեան Գերագոյն Խորհուրդը իր լայն շրջանակներով եւ աշխարհասփիռ անդամներով, պիտի շարունակէ իր աշխատանքները շարունակական թափով, ի խնդիր Արցախի պետականութեան ու ժողովուրդի պաշտպանութեան եւ բարօրութեան:

Յաջողութիւն մաղթելով Ձեր դժուարին առաքելութեան՝
Կը խնդրենք ընդունիլ մեր յարգանաց հաւաստիքը:

Ռամկավար Ազատական Կուսակցութեան
Գերագոյն Խորհուրդ



ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ՀԱՄԱԴՐՈՒԾ ՄԱՄՈՒԼԻ ՀԱՄԱՆՍԲՈՒՄ

Տիար Սամուէլ Շահրամանեան Վսեմաշուք Նորընտիր Նախագահ Արցախի Հանրապետության Ստեփանակերտ - ԱՅ

Վսեմաշուք Պրն. Շահրամանեան,

Յանուն Ռամկավար Ազատական Կուսակցութեան Համադրուած Մամուլի համախմբումին, սրտանց կը շնորհաւորենք Ձեզ, Արցախի Հանրապետության Նախագահ ընտրուելուն հպարտառիթ պատեհութեան համար: Առ այս Ձեզի կը մաղթենք ուժ, կարողութիւն եւ կամք՝ յաղթահարելու համար հերոսական Արցախին, իր նորագոյն պատմութեան այս շրջանին դիմագրուած ճգնաժամային մարտահրաւերները:

Նոյն առիթով կը շնորհաւորենք նաեւ Արցախի Հանրապետության Ազգային Ժողովը եւ բովանդակ արցախահայութիւնը, իմաստութեամբ, պետականամետ պահուածքով եւ ազգային բարձր գիտակցութեամբ տնօրինելու ինքնադեկլարման, ինքնիշխանութեան եւ ինքնապահպանման դժուարագոյն սակայն մարդկային արդարացի իրաւունքները հետապնդելը:

Զօրակցութիւն յայտնելով Ձեր գլխաւորութեամբ գործող Արցախի իշխանութեան եւ հերոսական արցախահայութեան, կը վստահեցնենք Ձեզի, Պարոն Նախագահ, որ Ռամկավար Ազատական աշխարհասփիռ մամուլի մեր օրգանները, իրենց խմբագրակազմերով, աշխատակիցներով եւ բազմազան ընթերցողներու լայն շրջանակներով շարունակական թափով յառաջ պիտի մղեն իրենց զօրակցական քարոզչական աշխատանքները, ի խնդիր Արցախի պետականութեան ամրապնդումին ու իր քաջարի ժողովուրդին պաշտպանութեան եւ բարեյաջող գոյերթին:

Յաջողութիւն մաղթելով Ձեր ազգանուէր դժուարին առաքելութեան, կը խնդրենք ընդունիլ մեր յարգանաց հաւաստիքն ու ամբողջական նեցուկի երաշխիքը:

ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ՀԱՄԱԴՐՈՒԾ ՄԱՄՈՒԼԻ ՀԱՄԱՆՍԲՈՒՄ



ԺԱՄ Է ՍՓԻՌՔԻ ԻՆՔՆԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ


ՅԱԿՈՒ ԱՐԵՏԻՔԵՆ

Յառեւելալ բացատրութիւններու պէտք չկայ հաստատելու համար, թէ համազգային մեր գլխաւոր հարցը, ճակատագրական խնդիրը կայ ու կը մնայ եւ գոնէ տեսանելի ապագայի համար պիտի մնայ հայոց պետականութեան պահպանման եւ հզօրացման պարտականութիւնը: Ազգային միւս բոլոր հարցերը կը ստորադասուին ասոր, բոլոր ջանքերու արդիւնաւորումը պայմանաւորուած են ասով: Առաւել եւս այսօր, երբ վտանգուած է նոյնիսկ այդ պետականութիւնը, ներառեալ կիսատուած-կծկուած Արցախը, որուն գոյութիւնը, որպէս ժողովուրդ եւ պետական միաւոր, վտանգուած է առաւել քան երբեք:

Երեսուն տարի շարունակ խօսեցանք ու շեփորեցինք Հայաստան-Արցախ-Սփիւռք եռամիասնութեան գաղափարը: Համահայկական մեր ջանքերուն մէկ կարեւոր մասը, այո՛, կեդրոնացուցինք Արցախը ազատագրելու, շէնցնելու վրայ: Հայ մարդը, հայաստանցի, արցախցի թէ սփիւռքահայ, իր արիւնը տուաւ, ապա նաեւ իր քրտինքը, դրամը, գիտելիքը: Այլ հարց՝ թէ որքանո՞վ տուաւ, ի՞նչ տըլաւ ու ե՞րբ տուաւ: Վերջինը կարեւոր է: «Հայաստան» հիմնադրամի վիճակագրութիւնը՝ շատ պերճախօս: Սկզբնական շրջանին՝ բաւարար, բայց հետզհետէ՝ նուազող տարողութեամբ: Խօսքը սփիւռքահայութեան չի վերաբերի միայն, այլեւ՝ ամբողջ հայութեան, ներառեալ՝ յաջորդական կառավարութիւններն ու կառավարիչները, ներառեալ տակաւին գործող կառավարութիւնը, որ հայկական բանակի սպառազինումը «շփոթեց» զինուորներու վարտիկ ունենալու եւ լայն ուտելուն հետ: Նաեւ՝ «թըռչող դագաղներուն» հետ, այսինքն՝ թանկարժէք, առանց հրթիռի գնում ՏՄ-35 ռազմօդանաւերուն հետ, որոնք պատերազմի ընթացքին երբեք օդ չբարձրացան: Ինչպէս ռուսական «Իսկէնտեր» հրթիռարձակները, գնում Նախորդ իշխանութեան օրօք, քանզի չունէին GPS համակարգը՝ լեռներու վրայէն ու ձորերու մէջէն սուրալու եւ խոցելու թշնամիին գլխաւոր թիրախները: Աւելին՝ դաս չբաղեցինք 2016-ի քառօրեայ պատերազմէն, ուր թշնամիին օգտագործեց drone-ները, առանց օդաչուի սարքերը, որոնք հետագային, 2020-ի 44-օրեայ պատերազմին, թըրքական «պայրաքտար»ներու ներմուծմամբ, ռազմի դաշտին վրայ փոխեցին ամբողջ վիճակը ի վնաս մեզի: Այլ խօսքով՝ թշնամիին՝ թուրքն ու ազերին, մեզի յաղթեց գիտական այն զինատեսակներով, որոնց գիտութիւնը մենք ունէինք կամ կրնայինք ունենալ տակաւին խորհրդային տարիներէն ի վեր:

Յաղթանակի դափնիներուն վրայ պառկիլ-հանգստանալը դարձուցեր ենք մեր սովորութիւնը, եւ յարափոփոխ աշխարհի սրընթաց վազքը դուրս է մնացեր մեր տեսադաշտէն՝ երբ հարցը կը վերաբերի մեր ազգային հարցերուն: Պահ մը մոռացութեան տուինք նոյնիսկ թուրք-թաթարական հին եւ միշտ նոր ծրագիրը՝ փան-թուրքիզմն ու համաթուրանականութիւնը, որուն զոհը դարձեր էինք դար մը առաջ՝ զանազան հանգրուաններով, մեծ ու «փոքր» կոտորածներով եւ ի վերջոյ Տեղասպանութեամբ եւ հայրենազրկումով: Մտածեցինք՝ 21-րդ լուսաւորեալ, մարդու եւ ժողովուրդներու իրաւունքներու պաշտպանաձեռութեան, ժողովրդավարութեան գերակայութեան այս դարուն ոչ մէկը եւ ոչինչ կրնայ սպառնալ մեզի նոր բնաջնջումով: Եւ ահա՛, հիմա այդ իրականութեան առջեւ ենք՝ մեր սովալլով շրջափակուած Արցախով, մեր խոցելի դարձած սահմաններով, մեր վտանգուած պետականութեամբ:

Արցախահայութեան օրհասական վիճակը իսկապէս յուզեց մեզ, որեւէ ձեռով օգնութեան փութալու, մեր ընդվզումն ու բողոքը յայտնելու ջանքերը չպակսեցան մեզի: Պէյրութ, Նիւ Եորք, Թեհրան, Ռաշինկթըն, Մոնթրէալ, Կըլենտէյլ, Պուէնոս Այրես, Լոնտոն, Մանչեսթըր եւ այլուր բողոքի ցոյցեր եղան, բողոքագիրներ յղուեցան, ճամբաներ գոցուեցան, նոյնիսկ քարկոծում՝ լիբանանեան ձեռով: Լոս Անճելըսի մէջ Ատրայէճանի հիւպատոսարանի շէնքը շրջափակուեցաւ եւ դիմացի հրապարակը նոր անունով կըքուեցաւ՝ Արցախի Հանրապետութիւն: Այդ շարժումներուն մեծամասնութիւնը, ինչպէս դիտել կու տար ընկերներէս մէկը, գերազանցապէս նախկին հայաստանցիներու մասնակցութեամբ եւ մղումով եղաւ: Մինչդեռ



ամբողջ հայաշխարհն էր յուզուած, զայրացած: Բայց աշխարհը զայն չտեսաւ: Չտեսաւ այն ոյժն ու թափը, զոր ունինք, բայց չենք գիտեր գործածել: Ու ճիշդ ատոր համար մարդիկ մեզ չարախնդրօրէն կ'ամ կ'արեկցութեամբ կ'ը նկատեն՝ Անուժ Ներուժ:

Ու որպէսզի պատկերը ըլլայ ամբողջական՝ խոստովանինք նաեւ մեր «պետական» ամօթը, որ կը շարունակուի հինգ տարի շարունակ՝ հետզհետէ աւելի տխմար դրսեւորումներով:

Մենք դժգոհ էինք այսպէս կոչուած նախկիններէն՝ իրենց ինքնակեդրոնութեան, ցուցադրականութեան, մարդիկն ու կազմակերպութիւնները ըստ անոնց նիւթական կարողութեան գնահատելու եւ սփիւռքահայութեան կարիքներուն ոչ համարժէք մօտեցման համար: Բայց անոնք, այդ «նախկիններ», կրցան, գոնէ, ստեղծել կամ նախաձեռնել համազգային հիմնադրամ, մասնագիտական յանձնաժողովներ եւ, ա մենակարեւորը, կէ դրոնական մարմիններ, որոնց փառապսակը դարձաւ Մեծ Եղեռնի 100-ամեակի կեդրոնական վարչութիւնը, որ, ինչպէս վերջին ժողովին կը յայտարարէր 3-րդ նախագահ Սերժ Սարգսեանը, սահմանուած էր դառնալու Հայաստան-Արցախ-Սփիւռք եռամասնական տեսական ղեկավարութիւնը:

Մինչդեռ այժմ ունինք միազուլիս, այսինքն՝ անզուլիս եւ անպատասխանատու «կառոյց» մը, որ Արցախը լքած է Թուրքի երախին, իսկ Սփիւռքը՝ բախտի քմահաճոյքին:

Վաղուց ժամանակն է արդէն որ Սփիւռքը ինքզինք կազմակերպէ, ինքզինք օժտէ կեդրոնական համակարգող կամ նման մարմինով մը: Ֆրանսահայութիւնը ունի այդ փորձը, 20-էն աւելի կազմակերպութիւններու մասնակցութեամբ: Լիբանանահայութիւնը նոյնպէս ունի, սակայն միայն կուսակցութիւններու ընդգրկումով: Լաւագոյն փորձը ունեցած է Ամերիկայի հայութիւնը՝ ի դէմս Ամերիկայի Հայկական Համագումարին, որ դժբախտաբար փլուզուեցաւ, երբ գլխաւոր donor-ները դարձան գլխաւոր ղեկավարները անոր, իսկ Քաֆեսճեան անձը տապալեց Ռաշինկթընի Տեղասպանութեան թանգարանի հրաշալի ծրագիրը: Յատկապէս 90-ականներուն այդ կազմակերպութիւնը, մասնակցութեամբ կենսունակ բոլոր՝ կուսակցական եւ բարեսիրական կազմակերպութիւններու, շատ ազդու գործունէութիւն ունեցաւ հայկական շահերը պաշտպանելու տեսակէտէ: շետեաբար ճիշդ պիտի ըլլար վերստին ուժերը հաւաքել Ամերիկայի, ներառեալ Գ անատան, տարածքին, նկատի ունենալով այդ երկիրներուն դիրքն ու ազդեցութիւնը մեր տարածաշրջանի համար:

Նոր աղետներ կը սպասեն մեր ժողովուրդին, նոր եւ դժուար յաղթահարելի մարտահրաւերներ ունինք, որոնք տեսական բնոյթ կրնան ստանալ: Անզօր եւ անուժ պէտք չէ գտնուինք անոնց դիմաց: «Անուժ Ներուժ» կարծիքը մեր մասին՝ պէտք է փոխենք միասնականութեամբ, բոլոր կարողութիւններու օգտագործումով:

Երեւան
«ՊԱՅՔԱՐ» շաբաթաթերթ

ՌՈՒՍԱԿԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆԸ ԱՍԿԵՐԱՆԻ ՃԱՄԲՈՎ ՀԱՍԱԲ ԱՐՅԱՆ

Մեպտեմբեր 12-ին ռուսական մարդասիրական օգնութիւնը Ասկերանի ճամբով կրցաւ մուտք գործել Արցախ:

Ստեփանակերտի տեղեկութիւններով՝ Ռուսիոյ կառավարութիւնը հանդէս եկած է Արցախի Հանրապետութեան մարդասիրական օգնութիւն տրամադրելու նախաձեռնութեամբ՝ նկատի ունենալով Արցախի մէջ ստեղծուած մարդկայնական ճգնաժամը: Կենսական նշանակութիւն ունեցող ապրանքներ պարունակող օգնութիւնը Արցախ ուղարկուած է ռուսական Կարմիր Խաչին միջոցով՝ այդ կազմակերպութեան բեռնատարներով:

ԱԳԱԳԵՅ
Շաբաթաթերթ

ABAKA

Hebdomadaire Arménien
Armenian Weekly ISSN 0382-9251

Publié par /Published by
Le Centre de Publication Tékéyan
825 rue Manogian, Saint-Laurent,
Québec H4N 1Z5

Tél: (514) 747-6680 • FAX: (514) 747-6162
e-mail: abaka@bellnet.ca
www.tekeyanmontreal.ca

Պատասխանատու խմբագիր՝
ՍԵՏԻՍ ՂՎԳՂՍԵԱՆ

Ծանուցումներու
նուիրատուութիւններու եւ
գրասենեակի պատասխանատու՝
ՍԱԼԻ ՄԱՐԿՈՍԵԱՆ

Թորոնթոյի պատասխանատու՝
ՄԱՍՈՒ Բ. ՄԱՍՈՒՐԵԱՆ

Canada
2nd Class \$80 (QC & ON)
1ère classe/first class \$150
U.S.A. 1st class (US) \$150
Autres pays/Other countries:
1st class (US)\$120
Per issue \$1.75
Dépôt légal: Bibliothèque du Québec

PM40015549R10945
TPS/GST - R119209294 • TVQ/PST #1006268699

Financé par le gouvernement du Canada
Funded by the Government of Canada



Tekeyan Cultural Association, Inc.



**Թեքեան
Մշակութային
Միութիւն**

755 Mt. Auburn St., Watertown, MA 02472-1509 USA. Tel: 617-924-4455. Fax: 617-924-2887. Email: TCAdirector@aol.com

**Board of Directors
of USA and Canada**

Մեծարգոյ
Տիար Սամուէլ Շահրամանեան
Նորընտիր Նախագահ
Արցախի Հանրապետութեան
Ստեփանակերտ

**President
Dr. Arshavir Gundjian**

**Vice President
Kevork Marashlian**

Մեծարգոյ Պրն. Նախագահ

**Secretary
Hagop Vartivarian**

Թեքեան Մշակութային Միութեան Միացեալ Նահանգներու եւ Գանատայի Կեդրոնական Վարչութեան անունով կու գանք ջերմօրէն շնորհաւորել Ձեզ Արցախի Հանրապետութեան Նախագահ ընտրուելու առիթով եւ կը մաղթենք ոյժ, կարողութիւն եւ կամք՝ յաղթահարելու բոլորիս սիրելի Արցախին դիմագրաւած ճգնաժամային մարտահրաւերները:

**Assistant Secretary
Mihran Toumajan**

Նոյն առիթով կը շնորհաւորենք նաեւ Արցախի Հանրապետութեան խորհրդարանը եւ բովանդակ արցախահայութիւնը իրենց իմաստութեան, պետականօրէն եւ ազգային բարձր գիտակցութեամբ տնօրինելու իր ինքնադէկլարման, ինքնիշխանութեան եւ ինքնապահպան դժուարագոյն խնդիրները:

**Treasurer
Maro Bedrosian**

Ամբողջական գորակցութիւն յայտնելով Ձեր գլխաւորութեամբ գործող իշխանութեան եւ հերոսական արցախահայութեան, կը վստահեցնենք, սիրելի Պարոն Նախագահ, որ Թեքեանական մամուլի մեր օրգանները, իրենց լայն շրջանակներով եւ աշխարհասփիտ անդամակցութեամբ, պիտի շարունակեն իրենց գորակցական քարոզչական աշխատանքները շարունակական թափով, ի խնդիր Արցախի պետականութեան ու ժողովուրդի պաշտպանութեան եւ բարօրութեան:

**Assistant Treasurer
Ara Tcholakian**

Յաջողութիւն մաղթելով Ձեր դժուարին առաքելութեան՝
Կը խնդրենք ընդունիլ մեր յարգանաց հաւաստիքը:

**Members
Carl Bardakian
Hilda Hartounian
Arto Berdge Manoukian
Mihran Minassian
Vatche Semerdjian
Hratch Torikian**

**Executive Director
Aram Arkun**

Ի Դիմաց՝

**Canada
Executive Secretary
Salpi Margossian**

Թեքեան Մշակութային Միութեան
Միացեալ Նահանգներու եւ Գանատայի
Կեդրոնական Վարչութիւն

Դոկտ. Արշաւիր Կոնճեան

**West Coast
Executive Secretary
Mayda Kuredjian**

**EMERITUS HONORARY
MEMBERS IN MEMORIAM
Dr. Haroutiun
Arzoumanian
Edmond Azadian
Hampartzoum Berberian
Dr. Nubar Berberian
Flora Gopoiian
Antranik Poladian
Dicran Simsarian**

Սոնթրեալ, Սեպտեմբեր 9, 2023

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Արքեպիսկոպոս Գրիգոր Կարամանլեանի Միջոցառումները



Միացեալ Նահանգները չի ճանչնար Արցախի Նախագահական ընտրութիւններուն արդիւնքները: Այդ մասին Սեպտեմբեր 11-ին կայացած ճեպագրոյցի ժամանակ յայտնած է ԱՄՆ Պետական Քարտուղարութեան խօսնակ Մեթիու Միլլըրը:

«Թէեւ կարեւոր է, որ Լեռնային Ղարաբաղը ունենայ վստահելի ներկայացուցիչներ այս գործընթացին (երկխօսութեան – իմք) համար, բայց ինչպէս նախապէս ըսած ենք, մենք չենք ճանչնար Լեռնային Ղարաբաղը որպէս անկախ եւ ինքնիշխան պետութիւն, եւ հետեւաբար, չենք ճանչնար այդ, այսպէս կոչուած, Նախագահական ընտրութիւններուն արդիւնքները, որոնք տեղի ունեցած են վերջին օրերուն», ըսած է ան:

Միլլըրի խօսքով՝ Միացեալ Նահանգները պիտի շարունակէ աջակցիլ Հայաստանի եւ Ատրայեյճանի ջանքերուն՝ լուծելու առկայ խնդիրները ուղիղ երկխօսութեան միջոցով:

«Մենք խորապէս մտահոգուած ենք Լեռնային Ղարաբաղի մէջ արագօրէն վատթարացող մարդասիրական իրավիճակով: Կը կրկնենք մեր կոչը՝ Լաչինի եւ Աղտամի երթուղիները աւելցնելու եւ միաժամանակ պետք է բացուին՝ թոյլ տալու մարդասիրական մատակարարումներու մուտքը Լեռնային Ղարաբաղ: Մենք ղեկավարներուն կոչ կ'ընենք չձեռնարկելու որեւէ գործողութիւն, որ կը մեծցնէ լարուածութիւնը կամ կը շեղէ այդ նպատակէն», նշած է Պետական Քարտուղարութեան խօսնակը:

Մեթիու Միլլըրը խօսած է նաեւ Սեպտեմբեր 11-20-ին Հայաստանի մէջ տեղի ունեցող հայ-ամերիկեան գորավարժութիւններուն եւ անոր հետեւած ռուսական արձագանգներուն մասին Կենք պարբերաբար կը մարզուինք մեր գործընկերներուն հետ համատեղ՝ պատրաստականութիւնը պահպանելու համար, եւ մենք շարունակաբար կը բարելաւենք մեր զինուած ուժերուն փոխգործունակութիւնը: Կը կարծեմ՝ հաշուի առնելով, որ Ռուսաստանը վերջին տարիներուն ներխուժած է իր երկու հարեաններու տարածք, ան պետք է ձեռընպահ մնայ տարածաշրջանի երկիրներուն անվճար վտանգութեան միջոցառումներու մա սին դա սա-խօսութիւններէ»:

ԾԵՐԱԿՈՒՏԱԿԱՆ ՊՈՊ ՄԵՆԵՆՏԵՍ. «ՈՒԱՇԻՆԿԹԸՆԸ ՊԵՏԸ Է ՊԱՏԺԱՄԻՉՈՅՆԵՐ ՍԱՅՄԱՆԷ ԱՏՐՊԷՅՃԱՆԻ ԲՈՆԱՊԵՏԻՆ ԴԵՄ»

Ալիւր ցեղասպան մտադրութիւններ ունի, Ուաշինկթընը պետք է պատժաւիջոցներ սահմանէ Ատրայեյճանի բռնապետին դէմ, յայտնած է Միացեալ Նահանգներու Ծերակոյտի Արտաքին Յարաբերութիւններու Յանձնաժողովի Նախագահ Պոպ Մենենտեսը:

«Սարսափելի իրադարձութիւններ» ամերիկացի ազդեցիկ քաղաքական գործիչը այսպէս սկսած է իր մօտ 15-վայրկեաննոց ճառը՝ զայն հասցեագրելով Սպիտակ Տան ղեկավարին:

Մանրակրկիտ ներկայացնելով Արցախի պաշարման հետեւանքները՝ սնունդի, մաքրութեան պարագաներու բացակայութիւն, տեղաշարժի արգելանք, մարդոց՝ այդ շարքին ծանր հիւանդի, ատրայեյճանցի ուժայիններու կողմէ առեւանգման դէպքեր, թերսնուած բնակչութիւն...

Մենենտեսը ցուցադրած է Արցախի մէջ սովամահութեան առաջին զոհի լուսանկարները եւ յատուկ ընդգծած, որ լուսանկարը արխիւային չէ, այդ մարդը օսմանեան թուրքերու իրականացուցած ցեղասպանութեան զոհերէն չէ, Հոլոքոսթի վերապարծներէն չէ, քամպոնացի չէ՝ «Ընդամենը քանի մը շաբթուայ լուսանկար է Լեռնային Ղարաբաղէն», ըսած է քաղաքական գործիչը:

«Ալիւրի կառավարութիւնը սարսափելի բռնութիւններու արշաւ կ'իրականացնէ, որոնք ունին Արցախի հայերու դէմ ցեղասպանութեան բոլոր նշանները: Անոնք նպատակային եւ չարամիտ կերպով շուրջ 120 հազար քրիստոնէայ հայեր արգելափակած են Ղարաբաղի լեռներուն մէջ... Ալիւրը եւ անոր վարչակարգը կը փորձեն այս մարդիկը սովի մատնել՝ ստիպելով մահանալ կամ ենթարկուիլ քաղաքական հպատակեցման», ընդգծած է Մենենտեսը:

ԱՄՆ Ծերակոյտի Արտաքին Յարաբերութիւններու Յանձնաժողովի Նախագահը նաեւ պաշտօնական Պաքոյի դիրքորոշումը վկայակոչած է, ըստ



որուն՝ «մտահոգուելու պատճառ չկայ», միաժամանակ Ալիւրի աղմկայարոյց յայտարարութիւնը մեջբերած է, որով ան կը սպառնար «շունչներու պէս վնասել» հայերը, յետոյ ալ՝ Լաչինի միջանցքը փակելէ յետոյ կը հաւաստիացնէ, թէ ցեղային զտումներ չ'իրականացնենք:

«Այս պահին ԱՄՆ կը ձախողի: ԱՄՆ չի բաւարարեր մարդասիրական կարիքները եւ հրապարակայնօրէն բաւականաչափ ճնշում չի գործադրեր Ալիւրի վրայ՝ դադարեցնելու ցեղային զտման արշաւը», յայտնած է Մենենտես՝ իր կուսակից Նախագահին կոչ ընելով դադարեցնելու անվտանգութեան

«ԱՅՍ ԴՊՐՈՅԸ ԿՐԿԻՆ ՊԻՏԻ ԲԱՆԱՔ...» ԴՈԿՏ. ՅՐԱՅՐ ՃԵՊԵՃԵԱՆ

Նիկոսիա, Կիպրոս: Օգոստոս ամսուան կիրակի օրերէն մէկն էր: Եղանակը՝ շատ տաք... Կիպրոսի մէջ ամրան տօթէն փախչելու համար անհրաժեշտ է կամ ծով ուղղուիլ, կամ ալ՝ գիւղական շրջանները, որպէսզի զովանաս: Կիպրոսի գիւղերը նոյնքան գեղեցիկ են, որքան՝ ծովեզերեայ շրջանները: Եթէ այս երկու կարելիութիւններէն մէկուն չընդառաջես, երեւի այդ պարագային պէտք է մտածել այլ ելքի մը մասին: Արտան՝ կողակիցս, եւ ես այդ կիրակի օրը ընտրեցինք սրճարան մը, ինչպէս վարժ ենք կոչել՝ «Քոֆի շափ» մը, որ լաւապէս զովացուած կըլլայ:

Այսպիսի սրճարանները ներկայ օրերու մշակոյթ-կենցաղի վերածուած են: Անոնք ամէն տեղ են, եւ անոնց կրնաս հանդիպիլ իւրաքանչիւր քայլափոխի: Եթէ անիկա սուրճի սիրահարներու տեղն է, բայց նոյնքան նաեւ՝ հանդիպումի եւ հաւաքի վայր մը, ուր կրնաս բարեկամներու հետ ժամեր անցընել՝ առանց ձանձրանալու: Եւ երեւի անոնք այլ տեղերէ ալ աւելի մատչելի են նիւթական իմաստով...

Նիկոսիոյ այս սրճարանին մէկ անկիւնը նստած՝ Արտան եւ ես կը սպասէինք մեր սուրճի մատակարարումին: Արտան համալսարանի դասախօս է, եւ ինչպէս ռեւէ ակադեմիական գործիչ՝ ինքն ալ ունի քննական միտք եւ հարցում ուղղելու յատուկ կարողութիւն: Այս բոլորին վրայ կու գայ անելնալու խօսակցութեան միջոցով բարեկամութիւններ հաստատելու Արտային յատկութիւնը: Մեր մօտ նստած էին երեք տարեցներ, որոնք շատ հաճելի խօսակցութեան բռնուած էին: Եւ չուզացան Արտայի քննական միտքն ու պրպտումները: «Այս երեք մարդիկը ինչո՞ւ միանակ եկած են», հարցուց Արտան ինձի: «Ո՞ր են անոնց կողակիցները, երբ այսօր կիրակի է»:

Կրցայ գուշակել գալիքը, բայց շատ արագ ընդմիջեցի Արտային հետաքրքրութիւնները: «Չըլլայ բան մը ըսես իրենց, ամօթ է...», եղաւ իմ կարճ եւ քիչ մըն ալ կտրուկ պատասխան-պատուէրս:

Երբ իմ տեղէն ելայ, որպէսզի կարենամ պատրաստուած սուրճերը բերել մեր սեղանը, արդէն վերադարձին տեսայ, որ «բանը բանէն» անցած էր: Արտան սկսած էր շատ հաճելի խօսակցութիւն մը՝ այս երեք տարեց կիպրացիներուն հետ: Տեսայ նաեւ, որ անոնք ալ սիրով ընդառաջած էին Արտայի հետաքրքիր, բայց նոյնքան բարեկամական հաղորդակցութեան:

Եւ պարզուեցաւ, թէ ինչո՞ւ այս երեք տարեց բարեկամները միանակ եկած էին... Մէկուն կողակիցը մահացած էր, միւսինը հիւանդ էր, իսկ երրորդը՝ ճամբորդած: Եւ կիրակի կէսօրէ ետք երեք տարեց բարեկամները եկած էին սուրճի մը շուրջ իրենց բարեկամութիւնը դարձեալ ջերմացնելու՝ կլիմային ջերմութեան հետ հաճելի ժամանակ մը անցընելու համար:

Անդրեասը, ըստ երեւոյթին, երեքին մէջ ամէնէն լեզուանին եւ փորձառուն էր: Երբ ան իմացաւ, որ հայ ենք, ըսաւ. « 2013 թուականին Եւրոպական խորհուրդին կողմէ դրկուեցայ Հայաստան՝ իբրեւ դիտորդ ստուգելու համար Նախագահական ընտրութիւններու թափանցիկութիւնը եւ ճշգրտութիւնը: Շատ գեղեցիկ երկիր մը ունիք: Առիթը ունեցայ այցելելու Ս. Էջմիածին: Շատ գեղեցիկ ու հոգեպարար էր պատարագը եւ՝ մեր կիպրական եկեղեցիի արարողութեան մօտիկ»:

«Օրթոտոքս-ուղղափառ եկեղեցիներ ենք, եւ այս իմաստով նմանութիւններ կան», ըսի Անդրեասին:

Չուզացաւ հայ-կիպրական յարաբերութիւններուն մասին մեր խօսակցութիւնը, եւ թէ ինչպէս երկու ժողովուրդներ ենք՝ նոյնանման մարտահրաւերներ եւ ձգնաժամեր ունեցող:

Կիպրոսը բարեկամ պետութիւն է Հայաստանի եւ հայ ժողովուրդին: Ասիկա շատ ակնբեր է: Կիպրոս այն քիչ պետութիւններէն է, որ միշտ ալ նեցուկ եղաւ մեզի ներկայ արցախեան հիմնահարցին մէջ: Անդրեաս եւ իր բարեկամները քաջատեղեակ էին արցախեան հիմնահարցին: «Արցախի ժողովուրդը արժանի է իր արդար իրաւունքին», ըսաւ Անդրեաս:

Երկու սեղաններու շուրջ նստած էինք եւ կը շարունակէինք մեր զրոյցը: Սեղաններուն դիմաց կար մեծ ապակի մը, ուր կրնայիր տեսնել սրճարանին դուրսի կողմերը: Իսկ դուրսը՝ սրճարանին հանդիպակաց կողմը, կերելէր Մելգոնեան կրթական հաստատութիւնը:

«Մելգոնեան կրթական հաստատութիւնը շատ կարեւոր դպրոց մըն էր ոչ միայն հայերուն, այլ նաեւ Կիպրոսի համար», ըսաւ Անդրեաս: «Չեմ կրնար հասկնալ, թէ իբրեւ հայեր՝ ինչպէս գոցեցիք այս դպրոցը»:

Անդրեասի եւ իր բարեկամներուն հետ ունեցանք նաեւ հաճելի խօսակցութիւն՝ կրթական ոլորտին վերաբերեալ: Երեքն ալ ուսեալ եւ բանիմաց կիպրացիներ էին, որոնք կեանքին մէջ ձեռք ձգած են բաւական փորձառութիւն եւ փորձ: Անդրեաս ինձի նայեցաւ եւ մատով ցոյց տուաւ Մելգոնեան հաստատութիւնը ապակիէն անդին եւ ըսաւ.

«Այս դպրոցը կրկին պիտի բանաք»:

Պատուէր, թէ մարտահրաւեր...

Հրաժեշտ առինք երեք կիպրացի բարեկամներէն, բայց նոյնքան՝ յագեցած ազգային-կրթական թէ տեղական խորքային զրոյցէ մը ետք:

Կարելի չէր չմտածել այդ կիրակի օր արժարժուած բոլոր միտքերուն մասին: Բայց մանաւանդ՝ Անդրեասի պատուէրին մասին...

Շատ բան խօսուեցաւ եւ գրուեցաւ Մելգոնեան կրթական հաստատութեան փակման եւ անոր առաքելութեան դարդեցման առնչութեամբ: Քննարկումներ, քննադատութիւններ, նեղուած ու բորբոքած տրամադրութիւններ, կեցուածքներ ու տակաւին այլ բաներ: Եթէ առաքելութիւնը կասեցուած է, բայց շէնքերը



տակաւին հոն են՝ Նիկոսիոյ մուտքին: Եւ կարելի չէ, որ չտեսնեմ այս շէնքերը գէթ իւրաքանչիւր օր, երբ կը գտնուիմ Կիպրոս, նկատի ունենալով, որ իմ տունս մօտիկ է դպրոցին: Եւ փակուած շէնքերը կը խօսին... Եթէ Անդրեասի միջոցով, բայց նոյնքան նաեւ՝ իմ ներսիդիս...

«Այս դպրոցը կրկին պէտք է բանաք»:

Մելգոնեան կրթական հաստատութեան փակուելէն ետք շատ բան փոխուեցաւ մեր ազգային եւ համահայկական ու համասփիւրջեան կեանքերուն մէջ՝ քիչ մը ամէն տեղ: Դպրոցի առաքելութիւնը կասեցուած է, բայց՝ ոչ երբեք մեր ներհայկական ու համասփիւրջեան կեանքերուն տարբեր ոլորտները: Մեր կեանքերը՝ իրենց յոյգերով, յոյսերով եւ տաղանապ-ընելիքներով, տակաւին շատ արագ կը փոխուին, եւ նոր իրավիճակներ կը ստեղծուին: Եւ այս բոլոր նոր իրավիճակներուն մէջ կան նոր տեսիլքներ ծանրացնող պայմանները եւ պահանջները:

Հայաստան-Արցախ մեր մի ասնական հա յրենիքը կ'ապրի մեծ տաղ նապներ: Միջին Արեւելքի կոտորածը վերջերը շատ են: Սփիւրջ(ներ)ը ունի(ն) ծանրացող եւ դժուար օրակարգեր: Օրակարգեր, որոնք մեծ են եւ կը պահանջեն ուժ ու կարողականութիւն:

Արամ Ա. վեհափառ հայրապետը, երկրորդ յաջորդական տարին ըլլալով, կը հրաւիրէ մեզ բոլորս՝ վերանայելու մեր սփիւրջեան իրականութիւնները եւ լիցքաւորելու զանոնք նոր տուեալներով՝ ի խնդիր հայապահպանումի եւ մեր կեանքերուն բարելաւումի համար: Այս իմաստով իւրաքանչիւր սփիւրջահայ գաղութ ունի իր կարեւոր պարտականութիւնը՝ վերանորոգելու ու վերանայելու իր առաքելութիւնը եւ ազգային հաստատութիւններուն ու կառուցանքներուն տալու նոր սլացք: Բայց նաեւ կայ անհրաժեշտութիւնը մեր համահայկական կեանքերը համադրելու եւ բոլորը զիրար շաղկապելու՝ մէկ կողմէ սփիւրջեան իրականութիւններու, բայց նոյնքան նաեւ՝ Հայաստան, Արցախ եւ սփիւրջ եռամիասնութեան ընդմէջէն: Հոս պէտք է նայիլ-վերանայիլ մեր իւրաքանչիւր միաւոր-հաստատութեան եւ ա նոր ա ռժեքին, ի նքնութեան, տեղին եւ դերին մէկ կողմէ նոյն գաղութի կեանքին համար, բայց նաեւ՝ համահայկական իրականութեան մէջ: Ներկայ օրերու մեր կեանքերը շատ անելիով իրարու հետ կամրջուած են, ուր պատեհութիւններ եւ կարելիութիւններ-կարողականութիւններ կարելի է նոյնպէս ներմուծել աշխարհագրական մէկ սահմանէ միւսը:

Եւ կիպրական դիտանկիւնէն, կան ներկայ օրերու հարցումները: Եւ այս՝ մեկնելով մէկ կողմէ կիպրահայ իրականութենէն, բայց նոյնքան նաեւ՝ համահայկական վիճակէն:

Արդեօք Կիպրոսի Մելգոնեան կրթական հաստատութիւնը տակաւին իր տեղը-դիրքը ունի (եւ տ ակաւին կ'ընայ ու նենայ) մեր համահայկական ու հայապահպանումի նոր առաքելութիւններուն մէջ: Երբ բոլորս պարտականութիւնը ունինք վերատեսութեան ենթարկելու մեր սփիւրջահայ կեանքերը տարբեր ոլորտներու ընդմէջէն կազմակերպելու ձեւերը:

Այս իմաստով, պիտի կարենանք գիտական-առարկայական ու քննական մօտեցումներով եւ ազգային համապարփակ պրիսմակէն մեկնելով՝ նայելու-վերանայելու...

Թէ ճիշդ էր կամ սխալ, որ Մելգոնեան կրթական հաստատութիւնը փակուեցաւ...

Եթէ ճիշդ էր, մինչեւ օրս չտեսանք տակաւին զայն փոխարինող այլ նախա-ձեռնութիւն մը, որ պիտի գար լեցնելու մեր հայկական կեանքերու նոր պահանջները իրենց նոր տուեալներուն ընդմէջէն: Վերջապէս, հայուն կեանքը կը շարունակուի եւ ան չէ կեցած: Եւ շարունակուող կեանքը կարիքը ունի նոր տուեալներու՝ ապահովելու համար ազգային մեր կեանքերուն շարունակականութիւնը: Եթէ պիտի փակենք մէկ միաւոր, նոյնպէս պիտի կարենանք նոր նախաձեռնութիւն մը մեջտեղ բերել-փոխարինել, կամ՝ գտնել այլ միջոց մը, որ պիտի նպաստէ մեր կեանքերու կազմաւորումին՝ նոր տուեալներու ընդմէջէն:

Եթէ սխալ էր... Այս պիտի նշանակէր, որ պարտինք ընդունիլ մեր սխալը... Սխալը ընդունիլը վեհանձնութիւն է եւ ոչ երբեք՝ ամօթ: Սխալը ընդունիլը

ABAKA

SECTION FRANÇAISE

LUNDI, 18 SEPTEMBRE 2023

Un autre nettoyage ethnique pourrait être en cours – et nous n’y prêtons pas attention

Écrit en anglais par Nicholas Kristof et publié dans *The New York Times* en date du 2 septembre 2023

Avec ses chambres de torture russes et le massacre de civils, la guerre en Ukraine est déjà assez horrible. Mais que se passe-t-il si un autre pays profite de cette diversion pour commettre ses propres crimes contre l’humanité ?

Rencontrez l’Azerbaïdjan. Vous n’avez probablement pas entendu parler de la brutalité de l’Azerbaïdjan envers une enclave arménienne appelée Haut-Karabagh, mais elle mérite un examen minutieux. L’ancien procureur général de la Cour pénale internationale, Luis Moreno Ocampo, que j’ai connu il y a des années lorsqu’il cherchait à rendre des comptes pour le génocide perpétré dans la région soudanaise du Darfour, décrit désormais de la même manière ce qui se passe au Haut-Karabagh.

« Un génocide est en cours contre 120 000 Arméniens vivant au Haut-Karabagh », a-t-il écrit dans un récent rapport. Nous avons tendance à considérer le génocide comme le massacre d’un groupe ethnique. Mais la définition juridique de la Convention sur le crime de génocide de 1948 est plus large et n’exige pas de massacres, à condition qu’il y ait certains « actes commis dans l’intention de détruire » un groupe ethnique, racial ou religieux particulier.

C’est ce que fait l’Azerbaïdjan, a soutenu Moreno Ocampo, en bloquant le Haut-Karabagh afin que les gens meurent ou fuient, détruisant ainsi une ancienne communauté.

« La famine est l’arme invisible du génocide », a-t-il écrit. « Sans changement radical immédiat, ce groupe d’Arméniens aura disparu dans quelques semaines. » « Il est extrêmement important de qualifier cela de génocide », m’a dit Moreno Ocampo, et il est également crucial que les États-Unis et les autres puissances mondiales - y compris la Grande-Bretagne, qui s’est montrée trop silencieuse - intensifient la pression sur l’Azerbaïdjan. Le concept de génocide a été développé en partie en réaction aux massacres massifs d’Arméniens perpétrés par l’Empire ottoman en 1915 et 1916, de sorte que la famine d’aujourd’hui des Arméniens en Azerbaïdjan suggère que l’histoire risque de boucler la boucle. Le groupe Genocide Watch a déclaré une « urgence génocide », l’Institut Lemkin pour la prévention du génocide a récemment émis une « alerte active au génocide », et l’Association internationale des spécialistes du génocide a mis en garde contre « le risque de génocide » et a appelé l’Azerbaïdjan à rendre des comptes pour crimes contre l’humanité.

La crise actuelle a débuté à la fin de l’an dernier, lorsque les Azerbaïdjanais ont commencé à bloquer la seule route vers le Haut-Karabagh, le corridor de



Latchine menant à l’Arménie, dont dépend le territoire pour sa nourriture et ses médicaments.

La Cour internationale de Justice a ordonné à l’Azerbaïdjan de lever le blocus. Au lieu de cela, le gouvernement azerbaïdjanais a établi un poste de contrôle sur la route et a commencé à bloquer même l’aide humanitaire transportée par le Comité international de la Croix-Rouge.

« Les gens s’évanouissent dans les files d’attente pour du pain », a déclaré la BBC, citant un journaliste local du Haut-Karabagh. Le rapport ajoute que Halo Trust, une organisation à but non lucratif qui travaille au déminage, a dû suspendre ses opérations « parce que son personnel est trop épuisé pour travailler après avoir fait la queue pour du pain toute la nuit et être rentré chez lui les mains vides ».

Un tiers des décès au Haut-Karabagh sont attribués par les autorités locales à la malnutrition, a indiqué la BBC. Je n’ai aucun moyen de vérifier ces rapports, mais tout indique que la situation est désastreuse - et qu’elle s’aggrave de jour en jour.

Pourtant, je crains que l’Occident soit fatigué et tourné vers l’intérieur, car il a également prêté peu d’attention aux autres crises mondiales autres que l’Ukraine, depuis les horribles atrocités en Éthiopie jusqu’au massacre de civils par les seigneurs de guerre du Soudan. Pour les dictateurs, ce n’est malheureusement pas un mauvais moment pour commettre des crimes de guerre.

Le contexte est que l’Azerbaïdjan autoritaire a une population majoritairement musulmane parlant une langue turque, tandis que le Haut-Karabagh a une population majoritairement chrétienne qui parle arménien. Lorsque l’Union soviétique s’est effondrée, le Haut-Karabagh a cherché à obtenir son indépendance ; une guerre s’est terminée par une impasse dans laquelle l’enclave fonctionnait de manière autonome mais avec des liens étroits avec l’Arménie voisine. En 2020, l’Azerbaïdjan a mené une brève guerre au cours de laquelle il a récupéré la majeure partie de l’enclave, et il veut maintenant récupérer le reste - et, je suppose, expulser une grande partie

Suite à la page 6

Discussion Arménie Iran sur l’escalade des tensions dans la région



Une conversation téléphonique a eu lieu entre le Premier ministre Nikol Pashinyan et le Président de la République islamique d’Iran Ebrahim Raisi.

Les deux hommes ont discuté des questions liées à la situation dans la région. En particulier, l’aggravation de la crise humanitaire au Haut-Karabagh en raison du blocus illégal du corridor de Latchine, la présence de troupes azerbaïdjanaises autour du Haut-Karabagh et de la tendance à une tension croissante à la frontière entre l’Arménie et l’Azerbaïdjan.

Le Premier ministre Pashinyan a une fois de plus souligné l’attachement aux accords de Prague du 6 octobre 2022 et de Bruxelles du 14 mai 2023, ainsi que l’approche visant à résoudre toutes les questions exclusivement par les voies diplomatiques et dans une atmosphère constructive.

Le Premier ministre a exprimé sa volonté de tenir des discussions urgentes avec le président azerbaïdjanais afin de réduire les tensions.

Des questions liées à l’agenda bilatéral Arménie-Iran ont également été abordées.

Déclaration de l’UE sur les élections présidentielles en Artsakh

Le service diplomatique de l’Union européenne (UE) a publié une déclaration après l’élection de Samvel Shahramanian à la présidence du Haut-Karabagh le 9 septembre.

L’UE a annoncé qu’elle ne reconnaissait pas les élections présidentielles dans le Haut-Karabagh, mais estime « qu’il est important pour les Arméniens du Karabagh de se consolider autour d’une direction de facto capable et désireuse de s’engager dans des discussions avec Bakou axées sur les résultats ».

L’UE a réaffirmé qu’elle ne reconnaissait pas le cadre constitutionnel et juridique dans lequel se sont déroulées les prétendues « élections présidentielles » à Khankendi/Stepanakert le 9 septembre 2023. Elle estime, simultanément, qu’il est important pour les Arméniens du Karabagh de se consolider autour d’une direction de facto capable et désireuse de s’engager dans des discussions avec Bakou axées sur les résultats. « L’UE s’est engagée à soutenir ce processus », a déclaré le Service d’action extérieure de l’Union européenne.



Concentration d’unités militaires azerbaïdjanaises le long des frontières de l’Arménie et du Karabagh

Arman Tatoyan, directeur du Centre de la Fondation Tatoyan pour le droit et la justice et ancien défenseur des droits de l’homme (médiateur) d’Arménie a écrit sur Facebook que les études montraient que les autorités azerbaïdjanaises concentraient également des unités militaires spéciales le long de la frontière avec l’Arménie et l’Artsakh. Il s’agit de la même politique qu’avant le 27 septembre 2020.

« Ces divisions, lors des guerres de 4 jours d’avril 2020, de 44 jours 2020 et des 13 et 14 septembre 2022, initiées par l’Azerbaïdjan, ont commis des crimes d’une cruauté particulière (torture, démembrement de corps, etc.).

« Ces unités armées sont auteurs de crimes de guerre et aucun d’entre eux n’a été puni, elles sont parrainées par les plus hautes autorités d’Azerbaïdjan.

« En ce moment, nous procédons à une vérification plus approfondie des preuves justifiant les crimes azerbaïdjanais, leurs intentions et la politique de l’État ».



L'UE en Arménie renforce ses patrouilles dans les zones frontalières



La mission de surveillance de l'Union européenne en Arménie (EUMA) a informé sur X (Twitter) qu'elle a accru ses activités de patrouille, entre autres, dans les zones frontalières entre l'Arménie et l'Azerbaïdjan des provinces arméniennes de Gegharkounik et Syounik pour observer tout développement militaire.

« Grâce à notre présence sur le terrain, nous visons à contribuer à apaiser les tensions et à rendre compte de la situation de manière impartiale à l'Union européenne », ajoute le communiqué.


